



5. ՄԱՐՏԻՐՈՍԻ ՀԵՔԻԱԹԸ

Ժամանակով մի թագավոր կար, էդ թագավորին ուներ եռեսուն տղա: Էդ եռեսուն տղան երոր մենծացան, յաշներն աճան, թագավորը կանչեց իրա վեզրին, ասեց.— Իմ տղերքանց յաշները հասել են, պտի պսակվեն, պտի էթաս, ման գաս, եռեսուն աղջիկ մի տանից գտնես, որ առնենք մեր տղերքանցը, որ մեջները խորթուծյուն չլինի, չբաժանվեն:

Վեզիրը թագարեք ա տենում, վեր ա կենում էթում: Ման գալով, ման գալով էթում ա մի գեղ, դոնաղ ա ըլնում տերտերի տանը: Տերտերին հարցնում ա.— Մի բանի եմ ման գալի, եռեսուն աղջիկ մի տանից պտի գտնեմ, ուղեմ թագավորի տղեքանցը:

Տերտերն ասեց.— Մտածեմ, կարելի ա գտնել էլ:

Տերտերը երկար ժամանակ մտածում ա, ասում ա.— Հլա ուշս վրես չի, մինչև լիսը բացվի, մտածենք՝ տենանք:

Երոր լիսը բացվեց, վեզիրը վե կացավ, գնաց քաղաքի դրաղը ման գալու. տեհավ գեղի դրաղին մի առու կա, գնաց առվի վրա կաննեց, թամաշ էր անում: Մի հինգ հրուպպից եղը տեհավ մի մարդ էկավ ըտի՝ կաննեց՝ մի քիչ եղը տավարը սկսեցին բերիլը. տավարի հետ տեհավ մի քանի աղջկերք էլ էկան կաննեցին դրա կըշտին: Վեզիրը մոտ գնաց, բարեց. տեհավ աղջկերքը ոտաբորիկ, գլուխ բաց են, ասեց.— Ըստոնք քու աղջրկե՛րքն են:

Ասեց.— Հա՛:

Ասեց.— Քանի՞ աղջիկ ունեմ:

Ասեց.— Փա՛ռք աստու, եռեսուն աղջիկ ունեմ:

Ասեց.— Բիրադի եռեսուն աղջիկ ա՛:

Ասեց.— Ծոռեսուն ա:

Ասեց.— Եբոր եռեսուն ա, էլ ըսօր նախիրը մի էթա, ես քեզ հետ գործ ունեմ:

Նախրչին ասեց.— Չեմ կարա եդ ընկնի, տավարը կկորչի:

Ասեց.— Տավարը դու ղրկա էթա, հինգ շահի ա, տասը շահի կտամ՝ դու բանդ ի՛լ¹:

Ասեց.— Չեմ կարա, ես պտի էթամ նախիրս:

Տեհամլ՝ չի լսում, հանեց հինգ մանեթ տվեց նախրչուն, թե.— Դու մի էթա՛, ուրչին ղրկա:

Նախրչին, որ տեհամլ հինգ մանեթը, ուրախացավ, ասեց.— Լա՛վ, ես չեմ էթա, ուրիշ մարդ կղրկեմ:

Եբոր նախրչին նախիրը ճամփու քցեց, վեզրի հետ էկան իրանց տուն: Վեզիրը տեհամլ՝ դրուստ եռեսուն աղջիկ են, մեկ մեկուց անդալաթ սիրուն են:

Վեզիրն ասեց.— Նախրչի աղպեր, քու աղջկերքը պտի տաս թագավորի տղերքին:

Նախրչին ասեց.— Թագավո՞րն էլ ունի եռեսուն տղա:

Ասեց.— Ըտենց ա, եռեսուն տղա թագավորինն ա, եռեսուն աղջիկ էլ քունն ա, տանք իրար:

Նախրչին ասեց.— Բախտավորութուն կըլի, որ թագավորին խնամի ըլնեմ, էլ նախիր խի՞ եմ էթում:

Վեզիրն ասեց.— Ըստեղ անմուլ դերձիկ կա՛:

Նախրչին ասեց.— Կա՛:

Ասեց.— Դե դնա՛, կանչա գա՛:

Նախրչին վե կացավ, գնաց, կանչեց:

Վեզիրը դերձիկն հրամայեց, ասեց.— Սրանց ոտից գլուխ թամուզ շոր պտի հագցնես:

Դերձիկն ասեց.— Շա՛տ լավ, փողը ձեզանից, առնիլն ու կարիլն ինձանից:

Դերձիկը շափսներն առավ, մի շաբթիւ մեջ կարեց, հաղրեց:

¹ Սպասիր (Ս. Բ.):

Աղջկերբը դնացին համամ, թաղա շորերը հագան, էլան մի մի լսի կտոր: Վեղիրը որ տեհավ, խելքը դնաց, ասեց.—Նո՛ր որ թագավորի լալաղ են:

Մի օրինավոր տուն էլ ճարեց, տարավ դրեց մեջը, մի գլադա բռնեց, ամեն պետքը հոգաց:

Վեղիրը խաբար դրկեց թագավորին, թե.—Քու թագարեքդ տե՛ս, ա՛րի, աղջկերբը ճարել եմ:

Թագավորը իրա եռեսուն տղեն ու հինգ հարուր շան ղոշունը վե կալավ՝ էկավ:

Վեղիրը դնաց թագավորի առաջ, վե կալավ, բերեց: Թագավորն էկավ, տեհավ որ շատ սիրուն աղջկերք են, շատ հավանեց: Հարսանիք արին, օխտն օր, օխտը դշեր, օխտը ձեռք դափ ու զուռնա ածեցին, կերան, խմեցին, քե՛ֆ արին: Երոր օխտն օրը թամամեց, էկավ վրա ութ օրը, թագավորը կանչեց վեղիրին, ասեց.— Թագարեք տե՛ս, է՛թանք:

Վեղիրը թագարեք տեհավ էթալու: Թագավորը կանչեց խնամուն, ասեց.— Կուղես էթանք մեր քաղաքը, կուղես ըստի կաց, ես քու ապրուստդ կտամ:

Նախըջին ասեց.— Չէ՛, թագա՛վորն ապրած կենա, ես ըստեղ կմնամ:

Թագավորը տեհավ, որ չի դալի, ասեց.— Գնա՛, ըսօրվանից Թիֆլիս քաղաքի խարջը ժողովա, կե՛:

Նոր «մնաս բարի» ասեց, առավ իրա հարսներն ու տղեքը դնաց:

Մեկ օր դնացին, էրկու օր դնացին, վրա իրեք օրը շագիր տվեցին, որ մի քիչ դինջանան: Հաց կերան, պառկեցին քնեցին: Վե կացան, տեհան որ մի Վիշապ շագրների շորս ղոռաղը փաթըթվել ա, ղլուխը դրքել ա ու կաննել ա: Թագավորը որ տեհավ, շատ վախեցավ, թուրը քաշեց, հասավ, որ ղլուխը կտրի:

Վիշապն ասեց.— Ի՛նչ բանի վրա ես, քե՛ղ էլ, քո՛ւ սաղ ղոշունդ էլ կփաթըթեմ պոչիս, կհանեմ երկինք, կէրեմ, կթափեմ գետինը:

Թագավորը լաց էլավ, խնդրվեց, ասեց.— Ուղո՛ւմ ես թագավորությունս տամ, ուղո՛ւմ ես սաղ երկիրս տամ, թո՛ղ տղեքս ու հարսներս առնեմ էթամ:

Վիշապն ասեց.— Չիլնի՛, քու պուճուր տղեն պտի ինձ տաս:

Թագավորը շատ տխրեց ըստեղ, լաց էլավ: Կանչեց վեզրին, ասեց.— Մեր հալը ի՞նչ պտի ըլնի:

Վեզրին ասեց.— Ո՛չ սուր կբանի դրա վրին, ո՛չ թուր, լավ ա մի տղեդ տաս՝ քսան իննը ազատես:

Թագավորը շատ լաց էլավ, տեհավ իլլաճ չկա, պուճուր տղին տվեց, Վիշապը վե կալավ, գնաց,

Վիշապը տղին տարավ մի ջոկ օթախի մեջ վե դրեց: Իրեք օրից եղը Վիշապը գնաց օթախի դուռը բաց արեց, մտավ նեքսե:

Ասեց.— Խի՞ ես լաց ըլնում:

Տղեն ասեց.— Ես հո բռնավոր չեմ, բերել քցել եք ըստեղ, ես Թագավորի տղա եմ, լավ կերել եմ, լավ խմել եմ, ազատ ման եմ էկե:

Վիշապը հարցրեց.— Անումդ ի՞նչ ա:

Ասեց.— Մարտիրոս ա:

Ասեց.— էգուց պտի քեզ ղրկեմ Սպահան:

Տղեն էլի լաց էլավ, ասեց.— Ես ճամփա չեմ գիտա, ո՞նց էթամ:

Ասեց.— Քեզ մի իմաստուն ձի կտամ, ձին նի՛լ, գնա՛:

Տղեն ասեց.— Ինչի՞ հմար էթամ:

Ասեց.— Պտի էթաս Զարգյարի կնկանը բերես:

Ասեց.— Ո՞նց բերեմ, Զարգյարի կնիկն ա ու չէկա՞վ:

— Ինչքա՛ն փուղ ուզում ես՝ կտամ, փողի դուռը քցա, վե կալ բե՛ր:

Էն էգսի օրը տղեն վե կացավ, ծախսի փողը վե կալավ, ձին նիլլավ, որ էթար, ասեց.— Բա որ ընտեղ փողս հատնի, ի՞նչ անեմ:

Ասեց.— Երոք իրիկունը տանից դուս գաս, ձեռով անես, ձեն տաս. «Վիշա՛պ», ես հազիր եմ ընտեղ, ինչ ուզես՝ կրերեմ:

Տղեն ընկավ ճամփա, գնաց: Համարյա հինգ օրվա ճամփեն մեկ օրը գնաց: Երոք տեհավ շատ ա հեռացել, ասեց.— Վիշապը էլ ինձ չի գտնի, հազիր լավ ա, էթամ հորս տունը:

Ճամփեն ծռեց, որ էթար՝ Վիշապն էկավ աղաթը փակեց, ասեց.— Ո՛ւր ես էթում:

Ասեց.— Դու ո՞րդիան էկար ինձ հասար, ես միտքս փոխել ի պտի էթայի մեր տուն:

Ասեց.— Զուր ա, հինգ ամսվա ճամփա էլ որ էթաս, ինչ որ մտքովդ անց կենա, ես քու մոտին եմ, չես կարա փախնի ինձանից:

Տղենն էլի տխրվեց, մտածեց, տեհալ որ իլլաջ շիւնի ազատ-
վելու, եզ դառալ, Սպահանի ճամփեն բռնեց ու գնաց:

Շատ գնաց, քիչ գնաց, աստված գիտա, գնաց հասալ Սպահան
քաղաքը: Գնաց, մի դուռ ծեծեց, մի պառալ կնիկ դուռ էկալ:

Ասեց.— Բարո՛ւ, նա՛նի, մի տեղ տաս, մի քանի օր մնամ:

Ասեց.— Քու լալաղին տեղ չկա:

Հանեց մի բուռ ոսկի տվեց, ասեց.— Կկառալորվենք, մի տեղ
արա:

Պառալը վե կացալ, կո՛ւժ ու բժուժ շարդեց, դուռ ասեց, ձին
քաշեց նեքսե, ասեց.— Քեղ էլ դուրբան, քու ձիուն էլ դուրբան, էս
սհաթին էթամ բաղար, ինչ հարկալոր ա բերեմ:

Իրիկունը տղեն դուռ էկալ, տեհալ մի ընե՛նց լիս ա ընկել
քաղաքի վրին, որ վառվում ա, ասեց.— Ա՛յ նանի, հլա դուռ արի,
էս ի՛նչ լիս ա:

Պառալը դուռ էկալ, ասեց.— էս Զարգյարի կնիկն ա, գլու-
խը փանջարիցը հանել ա, շաֆաղը տվել ա քաղաքը:

Տղեն ասեց.— Նանի՛, Զարգյարի կնիկն ըդքան սիրուն ա՛:

— Հա՛, դադեդ առնեմ, ընքան սիրուն ա, որ Զարգյարը վա-
խենալուցը քառասուն օթախից նեքսե ա դրել, քառասուն դուռը
վրին փակել, մի-մին բաց ա անում, նեքսե ա մտնում:

Առավոտը տղեն վե կացալ, գնաց Զարգյարին դտալ, բարով
տվեց, բարովն առալ, ասեց.— Ուստա՛, մի բան եմ շինիլ տալի,
կարա՞ս շինի:

Ասեց.— Ի՛նչ լիղուդ պըտըտի՝ կարամ:

Ասեց.— Մի չուխտ մաշիկ ա պետք, խալիս ոսկուց, կարա՞ս
շինի:

Ասեց.— Մի խուրշին ոսկի բերես, հինգ հարուր մանեթ էլ ձեռ-
նամուղդ¹ տաս, խի՞ չեմ շինի:

Ասեց.— Քանի՞ օրումը կարաս հաղրի՛:

Ասեց.— Էրկու օրումը կհաղրեմ:

Տղեն թողաց գնաց պառալի տունը. մնաց ընչանք իրիկուն.
իրիկունը որ ճրագնեբը կալալ, քնելու հանդամ² տղեն դուռ էկալ,
ձեն տվեց.— Վի՛շապ, Վի՛շապ, Վի՛շապ:

¹ Աշխատանքի վարձ (Մ. Բ.):

² Ժամանակ (Մ. Բ.):

Վիշապը ծոր տալով, ծոր տալով¹ էկավ, ասեց.— Հը՛, տղա՛,
ի՞նչ ես ուզում:

Տղեն ասեց.— Ինձ փող ա հարկավոր:

Ասեց.— Գնա՛ արխեին քնի, առավոտը կըլնի:

Տղեն գնաց քնեց: Առավոտը վե կացավ, տեհավ մի խուրչին
ոսկի հաղիր ա: Գնաց մի համբալ վե կալավ, էկավ, տվեց համբա-
լի շրլակը, տարավ Զարգյարի դուքանը: Հանեց մի ոսկի, տվեց
համբալին:

Զարգյարն ասեց.— Մի շահի տալու տեղակ մի ոսկի խի՞ տվիր:

Ասեց.— Բա՛ն չկա, քյասիր մարդ էր, տվեցի:

— Դե՛,— ասեց,— գնա՛, էրկու օրից եղբ արի, տա՛ր:

Տղեն վե կացավ, գնաց էլի պառավի տունը:

Էրկու օրից եղբ վե կացավ էկավ Զարգյարի դուքանը, բարով
տվեց:

Զարգյարը տեղիցը վե կացավ, բարեն առավ, ասեց.— Նըս-
տի՛:— Նստեց:

Ասեց.— Հաղի՞ր ա:

Ասեց.— Հա՛ղիր ա:

Գնաց բերեց. տղեն տեհավ, որ շատ լավ բան ա, համարյա
մի թամաշի բան. առավ հագավ, ըսկսեց դուքանումը ման գալ: Նդո
հանեց, ասեց.— Ուստա՛, արի դու մի հագի՛, տենանք:

Ասեց.— Ախար քեզ հմար եմ հաղրե, ոնց ես հագնեմ:

Ասեց.— Բա՛ն չկա, դու հագի, մի ես մտիկ տամ:

Ուստեն հագավ, տղեն ասեց.— Ուտի՛դ շատ լավ էկավ, քե՛զ
փեշքաշ:

Ասեց.— Ըղջան փող տվիր ու փեշքաշ ես անում:

Ասեց.— Բա՛ն չկա:

Ասեց.— Մնաս բարով,— ու գնաց:

Էգսի օրը էլի էկավ, ասեց.— Ուստա՛, կարա՞ս զարլամա ոս-
կուց մի շալվար կա՞րի:

Ասեց.— Շա՛տ լավ, շատ լավը կկարեմ: Էրկու խուրչին ոսկի
կտաս, հաղար մանեթ էլ ձեռնամուղդ: Իրեք օրից եղբ արի տա՛ր:

Տղեն վե կացավ, գնաց: Իրիկունը, քնելու հանգամին դուս
էկավ դուռը ձեն տվեց.— Վի՛շապ, Վի՛շապ, Վի՛շապ:

¹ Բարակել, երկարել (Մ. Ք.):

Վիշապը ծոր տալով, ծոր տալով էկավ, ասեց.— Ի՞նչ ուզում
ես, ուզա՛, առավոտը հագիր ա:

Տղեն ասեց.— էրկու խուրջին ոսկի:

Ասեց.— Գնա՛ տեղդ արխին քնի, առավոտը հագիր կըլնի:

Տղեն թողաց, գնաց քնեց: Առավոտը վե կացավ: տեհավ էրկու
խուրջին ոսկին գլխի վիրեք դրած ա: Վե կացավ գնաց բազար, էրկու
համբալ կանչեց, տվեց շրլակները, տարավ Զարգյարի դուքանը:
Համբալներին ամեքին էրկու ոսկի տվեց:

Զարգյարն էլի նախանձեց, ասեց.— Մի մի շահի տո՛ւ, ընչի՞
հմար էրկու-էրկու ոսկի տվիր:

Ասեց.— Քյասիբ ին, տվեցի:

Իրեք օրից եղբ վե կացավ, էկավ, ասեց.— Հագիր ա՛:

Ասեց.— Հա՛գիր ա:

Վե կացավ բերեց, տղեն տեհավ խելքը գլխիցը գնաց, ընքան
լավ բան էր կարել:

Հագավ, դուքանի մեջը ման էկավ, ասեց.— Ուստա՛, հլա արի
դո՛ւ հագի, տենանք, վրովդ հա՞րմար ա:

Զարգյարը ասեց.— Քեզ հմար եմ կարե, ինձ հարմար չիլնի:

— Զէ՛, — ասեց, — հագի:

Զարգյարը հագավ, վե կացավ ման էկավ:

Տղեն ասեց.— Ուստա՛, քեզ շատ հարմար ա, քե՛զ փեշքաշ
ըլնի:

Ասեց.— Քեզ հմար եմ կարել, ինչ նեղություն ես քաշում:

Ասեց.— Բա՛ն չկա, քեզ փեշքաշ եմ անում:

Զարգյարը շատ շնորհակալ էլավ, տղեն վե կացավ գնաց:
Մնաց ընչանք իրիկուն, Զարգյարը էթալու վախտը դրեց աղլըխի
մեջը, տարավ տուն: Երոր քառասուն դուռը բաց արեց, մտավ կըն-
կա օթախը, դրեց ըստուլի վրա:

Կնիկն էկավ թամաշ արեց.— էս ի՞նչ անդին բան ա, ա՛յ մարդ:

Զարգյարն ասեց.— էլի էն թագավորի տղեն ա փեշքաշ արե:

— Բա ընչի՞ հմար չես կանչում դա, մի կտոր հաց ուտի մեր
տանը:

Ասեց.— Պտի կանչեի, չէլավ:

Ասեց.— Ըսքան բան փեշքաշ անելուց եղբ պտի կանչեիր:

էգսի օրը տղեն էլի վե կացաւ, էկավ Զարգյարի դուքանը ասեց.— Ուստա՛, մի լավ արա պտի կարես ոսկուց, որ գին շու-
նենա:

Ասեց.— Ա՛շքիս վրա. իրեք խորջին ոսկի բեր, հաղար հինգ հարուր մանեթ էլ շինելու փող տու, շորս օրից եղը արի, տա՛ր:

Տղեն վե կացավ գնաց. իրիկունը էլի կանչեց Վիշապին: Վի-
շապը ծոր տալով, ծոր տալով էկավ:

— Հը՛,— ասեց,— ի՞նչ ես ուզում:

Ասեց.— Իրեք խորջին ոսկի:

Ասեց.— Առավոտը հաղիր կըլնի:

Տղեն եդ դառավ, էկավ քնեց: Առավոտը վե կացավ, տեհավ
գլխավիրեն ա, գնաց իրեք համբալ կանչեց, տվեց շաւկները, տա-
րավ Զարգյարի դուքանը: Հանեց ամեն մի համբալին իրեք ոսկի
տվեց:

Զարգյարը նախանձեց.— էս ի՞նչ բան ա,— ասեց,— ամեքին
մի-մի շահի տո՛ւր, ընչի՞ հմար ես իրեք-իրեք ոսկի տալի:

Ասեց.— Քյասիբ են:

Տղեն թողաց, գնաց:

Չորս օրից եղը տղեն էկավ Զարգյարի դուքանը, ասեց.— Ուս-
տա՛, հաղիր ա՛:

Ասեց.— Հա՛ղիր ա:

Բերեց, տղեն հագավ, դուքանի մեջը ման էկավ: Հանեց,
ասեց.— Ուստա՛, ա՛րի դու հագի, ես տենամ:

Ուստեն հագավ:

Տղեն ասեց.— Շա՛տ հարմար ա քեզ, քե՛զ փեշքաշ ա:

Ասեց.— Ախար քեզ հմար ի կարե, էդ խի՞ ես քեզ հմար կա-
րել տալի, փեշքաշ անում ինձ:

Տղեն ասեց.— Ոչինչ, քեզ ավելի հարմար ա գալի:

Տղեն վե կացավ գնալու, ասեց.— Մնա՛ս բարին:

Ասեց.— Էթա՛ս բարին,— էս անգամ էլ շկանչեց:

Զարգյարը ընչանք իրիկուն բանում ա, իրիկունը ոսկի աբէն
դնում ա աղլխի մեջը, տանում ա տուն. բաց ա անում, շանց ա
տալի կնկանը:

Կնիկը որ տենում ա՝ զարմանում ա, ասում ա.— էս ի՞նչ սի-
րուն բան ա, էլի էն թագավորի տղեն տվե՞ց:

— Հա՛,— ասեց:

— Բա խի՞ չի կանչեցիր տուն, մի կտոր հաց ուտեր:

Ասեց.— Պտի կանչեի, շըշկլվեցի, չկանչեցի:

Տղեն տեհավ, որ Զարգյարը իրան տուն չկանչեց, ումուղը կըտրեց, մի քանի օրից եղը ինքը հիվանդացավ մախսուս, պառավին չըկեց Զարգյարի դուքանը:

Պառավն ասեց.— Թագավորի տղեն շատ հիվանդ ա:

— Դրա հը՛մար էս քանի օրը չէր էրևում:

— Շատ դժար հիվանդ ա, քեզ կանչում ա:

Տղեն ասեց.— Հանքս կտրվում ա, ըստիան ինձ տար մի լավ տուն:

Զարգյարն ասեց.— Մեր տանիցը լավ տուն չկա, ա՛րի տանեմ մեր տունը:

Վե կալավ, տարավ իրա տունը: Զարգյարի կնիկը սկսեց դրան լավ մտիկ տալ: Երոր Զարգյարը գալիս էր, տղեն հոգու հետ էր ըլնում, երոր էթում էր, նստում կնկա հետ անուշ-անուշ զրից էր անում: Մեկ, էրկու, էդ կնկա կամքն առավ, ասեց.— Ես էկել եմ քեզ տանեմ, կգա՛ս:

Կնիկն ասեց.— Ես ուրախ կըլնեմ՝ էս բանտարկությունից պըրծնեմ:

Տղեն ասեց.— Ես կէթամ պառավի տունը, ընտեղան լախում կտամ մինչև ըստեղ, դու էն վախտը կէթաս-կգաս, Զարգյարն էլ կարծիք չի անի:

Իրիկունը որ Զարգյարը տուն էկավ, տղեն վե կացավ նստեց, ասեց.— Զարգյա՛ր, ես ըսօր շատ լավ եմ, էգուց կէթամ իմ տունը:

Զարգյարն ասեց.— Քո՛ւ կամքն ա:

էգսի օրը տղեն վե կացավ, Զարգյարի հետ գնաց պառավի տունը:

էգսի օրը կանչեց լախմչի, ասեց.— Կարա՛ս վախտեց վախտ՝ լախում տաս ըստիան ընչանք Զարգյարի օթախները:

Լախում տվողն ասեց.— Ա՛չքիս վրին:

Լախումը տվեց, Զարգյարի կնիկը վե կացավ, էկավ տղի մոտը, կերան խմեցին, քեֆ արին, վե կացավ գնաց:

Մի հինգ օրից եղը տղեն գնաց Զարգյարի մոտն, ասեց.— Ուստա՛, ա՛րի էթանք, որ ես նշան պտի դնեմ:

¹ Մի օրում (Մ. Բ.):

Զարգյարն ասեց.— Շա՛տ լաւ բան ես արեմ, է՛թանք:
Իրար հետ վե կացան, էկան պառաւլի տունը, Զարգյարը տե-
հաւ, որ իրա կնիկը ըտեղ ա՛, աչքերին չհաւատաց, ինքն իրան
ասեց.— Մի՛ էթամ տուն, տենամ:

Տղեն ասեց.— Զարգյա՛ր, գնա տերտերին կանչա:

Ասեց.— Չէ՛, ես էթամ տուն դիպենեմ, դա՛մ:

— Որ էթում ես տուն՝ ուստակնկանը բն՛ր:

Ասեց.— Լա՛վ:

Վե կացաւ գնաց տուն: Կնիկը ընչանք նրա տուն էթալը լա-
խըմով անցաւ, գնաց իրա օթախը, նստեց:

Զարգյարն էկաւ տուն, տեհաւ կնիկը ընտեղ ա, ասեց.— Ա՛յ
կնիկ, թագաւորի տղեն նշան ա գնում, վե կաց, էթանք:

Կնիկն ասեց.— Ես չեմ դա, էթում ես՝ գնա՛: Ես ըսքան վախտ
եք եմ ուրախացեմ, մարդամեջ մտեմ, որ հմի նոր ուրախանամ:

Զարգյարը վե կացաւ, գնաց: Գնաց տեհաւ էլի էդ կնիկը տղի
կշտին նստած ա: Վե կացաւ գնաց տերտերի քամակը, վե կալաւ
էկաւ: Տերտերն էկաւ նշան դրեց: Կերան, խմեցին, լաւ քեֆ արին:
Տերտերը վե կացաւ, գնաց իրա տունը, Զարգյարն էլ վե կացաւ
գնաց իրա տունը: Գնաց, տեհաւ որ կնիկը էլի տանն ա: Կնկանն
ասեց.— Ա՛յ կնիկ, կասես դու ընտեմ ըլնեիր:

Կնիկն ասեց.— Դու կարծըքաւոր¹ մարդ ես, ընտեղ ըլնեի,
սիրտդ կճաքեր:

Մի տասն օրից եղը տղեն վե կացաւ, գնաց Զարգյարի դու-
քանն, ասեց.— էթա՛նք, պտի պսակվեմ, էթամ. ըսօր հարսա-
նիքս ա:

Զարգյարը վե կացաւ, գնացին. գնաց, տեհաւ իրա կնիկը ըն-
տեղ նստած ա: Էլի աչքերին չհաւատաց, ասեց.— էթամ տուն դիպ-
ենեմ, դա՛մ:

Տղեն ասեց.— Երբ որ տուն ես էթում, ուստակնկանը վե կալ,
արի՛:

Գնաց, տեհաւ կնիկը տանն ա:

Ասեց.— Ա՛յ կնիկ, թագաւորի տղեն պսակվում ա, վե կաց,
էթա՛նք:

¹ Կասկածոտ (Մ. Բ.):

Ասեց.— Բախտավոր ինձ, ե՞րբ եմ տանից դուս էկե, որ ըսօր դուս գամ, էթում ես՝ զնա՛:

Վե կացավ զնաց: Գնաց, տեհավ կնիկն էլի ընտեղ նստած ա: Նոր վե կացան, թաղարեք քաշեցին, զնացին դպա ժամը: Գնաց, պսակվեց, եդ դառան էկան տուն: էկան, լավ կերան, խմեցին, լավ քեֆ արին:

Լիսը բացվեց, Զարգյարը վե կացավ, զնաց իրանց տուն. զնաց, տեհավ, որ կնիկը անուշ քնած ա:

Ձեն տվեց, ասեց.— Վե՛ր, թագավորի տղեն էթում ա, էթանք ճամփու զնենք:

Ասեց.— էթում ես, դո՛ւ զնա, ես չեմ գա, ես ըսքան վախտ տանից դուս չեմ էկե, ո՞ւր պտի էթամ:

Զարգյարը վե կացավ, զնաց: Գնաց, տեհավ որ իրա կնիկն էլի ըտե նստած ա:

Թագավորի տղեն նիլլավ իրա ձին, Զարգյարն ու թագա հարսը նստեցին փայտոն, պառավին «մնաս բարով» արին, զնացին:

Գնացին, քաղաքից դուս եկան, թագավորի տղեն ասեց.— Դե՛, Զարգյար, դու եդ դա՛ն, շատ շնորհակալ եմ:

Թագա հարսը Զարգյարի հետ «մնաս բարով» արեց, նիլլավ իրա մարդի թարքը, քշեցին, զնացին:

Զարգյարը եդ դառավ, էկավ հասավ իրա տունը, քառասուն դուռը բաց արեց, մտավ կնկա օթախը, տեհավ, որ կնիկը չկա: Հասկացավ, որ էն իրա կնիկն էր, թագավորի տղեն տարավ: Վազեց, նիլլավ կտուրը, որ տենա թե տղեն հեռո՞ւ ա, թե մոտիկ ա: Տեհավ որ շատ հեռու ա, սրտի հերսիցը իրան քցեց կտրիցը՝ մեռավ:

Թագավորի տղեն վե կալավ կնկանը, զնաց դպա Վիշապը: Շատ զնաց, քիչ զնաց, հասավ Վիշապի տեղը, տեհավ Վիշապը դուս էկավ, ասեց.— Գալըդ բա՛րին, բերի՛ր:

Ասեց.— Բերի՛:

— Ե՛ս եմ սիրուն, թե Զարգյարի կնիկը,— ասեց Վիշապը:

Ասեց.— Դու օձ ես, ո՞րդիան սիրուն ըլնես, Զարգյարի կնիկը մի հուրի-փարի ա:

Վիշապը մտավ նեքսե, իրա օձի շապիքը թողաց, մի աղչկա շորեր հագավ, դուս էկավ, ասեց.— Թագավորի տղա, ե՛ս եմ սիրուն, թե Զարգյարի կնիկը:

Թագավորի տղենն որ տեհաւ՝ դարմացաւ, տասը դաթ Զարգյարի կնկանիցը սիրուն էր:

Ասեց.— Դու տասը դաթ Զարգյարի կնկանիցը սիրուն ես: Ի՞նչ էր պատճառը, որ դու դառել իր օձ:

Ասեց.— Էդ իմ քիրն ա, երոր տվեցի Զարգյարին, էդ օյինը հանեց իմ քվոր զուլսը, քառասուն օթախի մեջ գրեց, ո՛նչ լիս էր տեսում, ո՛նչ արեգակ, դրա հմար սրտիս հերսիցը ես դառա օձ: Շնորհակալ եմ քեզանից, դու ազատեցիր նրան, ես էլ ուրախությունիցս դառա աղջիկ. Զարգյարի կնիկն էլ քեզ զուրբան, ես էլ քեզ զուրբան:

Ասեց.— Էթամ Զարգյարի տունը, ինչքան ոսկի, արծաթ կա, հավաքեմ, բերեմ, էթանք:

Էրկու օրվա մեջ գնաց, ինչ կար շկար, վե կալաւ քերեց: Վե կացան գնացին տղի հոր տունը. հերը դաի ու զուռնով դրանց առաջն էկաւ, տարաւ տուն, օխտն օր, օխտը գշեր հարսանիք արեց, էդ էրկու աղջկա հետ էլ պսակեց:

Նրանք հասան իրանց մուրադին, ու՛ր որ կարոտ ա՝ նա էլ հասնի իրա մուրադին:

Աստանից իրեք խնձոր ընկաւ, մինն՝ ասողին, մինը՝ լսողին, մինն էլ անկաջ դնողին:

